

կուտայ այն պարագան որ, Հայերը, իրենց ինքնապաշտպանութեան միջոցին, ուժեղեր կամ ուժանակներ չեն գործածած: Իրենց պաշտպանութիւնը կատարած են հասարակ զէնքերով, այնպէս որ բացայայտ է որ եթէ տէր եղած ըլլային նմանօրինակ միջոցներու՝ կըրնային զանոնք դիւրութեամբ գործածել և անոնց արդիւնքը կարելի էր շատ դիւրութեամբ ճանչնալ: Նըմանօրինակ պայթուցիկներու ամենափոքր մէկ հետքին անգամ չենք պատահած, որպէսզի կարողանայինք անոնց գործածութիւնը ենթադրել, ուստի և շատ բընական է թէ առիկա յայտնի չարախօսութիւն մըն է՝ որուն նպատակն է Հայերու վրայ ձգել զէնքերու պատասխանատուութիւնը:

Գալով այն թնդանօթ կոչուածներուն, որոնք իբրեւ թէ խռովութեանց միջոցին Ատանայի շրջակայքը գտնուած են, ատոնք երկու հատ ջուրի խողովակներ էին՝ փայտով շրջապատուած և վառօդով լեցուած: Նաճար օղլու դիւզին Հայերը զայն պատրաստած էին գործածելու համար՝ չունենալով ուրիշ պաշտպանութեան միջոցներ. ու ասիկա անգամ մը ևս կուգայ ապացուցանելու որ այդ կողմերու Հայերը ապստամբութեան գաղափարներ անուցանելէ շատ հետի էին:

Բոլոր այս մանրամասնութիւնները վճռականօրէն կ'ապացուցանեն իրողութիւն մը. այսինքն այն թէ՛ Ատանայի մէջ կառավարական պաշտօնեաները և անոնց արքանեակները կանխահօգ կարգադրութեամբ պատրաստած են այնպիսի պարագաներ, որ իրենց մտածումով՝ իրենց վրայ ինկած պատասխանատուութիւնը սլտի կարենային նուազեցնել այն ջարդերուն մէջ՝ զոր իրենք իսկ ծրագրեցին և որոշեցին, զէթ պաշտօնապէս, այդ պատասխանատուութիւնը նետել Հայերուն վրայ: Այս նպատակին հասնելու և Իսլամներու վայրագ մո-